

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«\_\_\_\_\_» \_\_\_\_\_ 2013թ. N \_\_\_\_\_-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ  
ՀՈՒԼԻՍԻ 13-Ի N 1002-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո Ր Ո Շ ՈՒ Մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 13-ի «Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը հաստատելու մասին» N 1002-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները՝

1) որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ կարգ) 11-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«11. Տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող՝ համապատասխան համայնքում, իսկ դրա բացակայության դեպքում՝ համապատասխան մարզի մյուս համայնքներում հաշվառված մեկից ավելի անձանց կողմից դիմում ներկայացվելու դեպքում՝ նախապատվության իրավունքը տրվում է տվյալ քաղաքապետարանի (գյուղապետարանի) աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) հաստիքների կրճատման հիմքով պաշտոնից ազատված և կադրերի ռեզերվում գրանցված անձին, այս պայմանի հավասարության կամ բացակայության դեպքում՝ առավել բարձր համայնքային ծառայության դասային աստիճան կամ դրան համապատասխանող՝ պետական ծառայության դասային աստիճան (կոչում) ունեցող անձին, այս պայմանի հավասարության կամ

բացակայության դեպքում՝ տվյալ աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար կազմակերպված մրցույթում հաղթող ճանաչվելու և պաշտոնում չնշանակվելու հիմքով կադրերի ռեզերվում գրանցված անձին, այս պայմանի հավասարության կամ բացակայության դեպքում՝ համայնքային ծառայության առավել երկար ստաժ ունեցող անձին, այս պայմանի հավասարության կամ բացակայության դեպքում՝ պետական ծառայության առավել երկար ստաժ ունեցող անձին, այս պայմանի հավասարության կամ բացակայության դեպքում՝ կադրերի ռեզերվում առավել երկար ժամկետով գտնվող անձին, իսկ այս պայմանի հավասարության կամ բացակայության դեպքում՝ առավել երկար աշխատանքային ստաժ ունեցող անձին:».

2) կարգի 17-րդ կետից հանել «ժամկետային աշխատանքային» բառերը.

3) կարգի 17-րդ կետում «և «Ժ»» բառերը փոխարինել ««Ժ» և «Ի»» բառերով.

4) կարգի 21-րդ կետի 2-րդ ենթակետում ««Ժ»» բառից հետո լրացնել «և «Ի»» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում \_\_\_\_\_ -ից:

## Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 13-Ի N 1002-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

---

### **1. Անհրաժեշտությունը**

Ներկայացված որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 25 փետրվարի 2013 թվականի ՀՕ-4-Ն Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունմամբ ներմուծված եզրույթների կիրառման և դրա հետ կապված ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու համար նախապատվության իրավունք տալու անհրաժեշտությամբ:

### **2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները**

Հայաստանի Հանրապետության կառավարության 13.07.2012թ-ի N 1002-Ն որոշմամբ հաստատված կարգի 11-րդ կետով նկարագրվում են ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու համար նախապատվության իրավունք տալու դեպքերը, որոնցում նպատակահարմար է նախատեսել նաև պետական ծառայության համապատասխան բարձր դասային աստիճան (կոչում) ունենալու, ինչպես նաև պետական ծառայության առավել երկար ստաժ ունենալու դեպքերը:

### **3. Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը**

Ներկայացված նախագիծը տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականության փոփոխություն չի նախատեսում:

### **4. Կարգավորման նպատակը և բնույթը**

Ներկայացված որոշման նախագծի ընդունմամբ հիմնականում կհստակեցվեն անձանց հետ ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու համար նախապատվություն տալու դեպքերն՝ ըստ հերթականության:

### **5. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք**

Նախագիծը մշակվել է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի համայնքային ծառայության հարցերի վարչության կողմից:

## **6. Ակնկալվող արդյունքը**

Որոշման նախագծի ընդունմամբ պետական ծառայության համապատասխան բարձր դասային աստիճան (կոչում) ունենալու, ինչպես նաև պետական ծառայության առավել երկար ստաժ ունենալու դեպքերը հաշվի կառնվեն ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու նախապատվություն տալու ժամանակ:

## **ՏԵՂԵԿԱՆՔ**

**Նախագծի ընդունման առնչությամբ ընդունվելիք այլ իրավական ակտերի նախագծերի կամ դրանց ընդունման անհրաժեշտության բացակայության մասին**

Ներկայացված որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու անհրաժեշտություն չկա:

## **ՏԵՂԵԿԱՆՔ**

**Ներկայացված որոշման նախագիծն ընդունելու կապակցությամբ պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացումների կամ նվազեցումների մասին**

Ներկայացված որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացումներ կամ նվազեցումներ չեն սպասվում: